



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

27 հուլիսի 2020 թվականի N 248-Ա

ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԵՂՐԻԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ
(ԾԱԾԿԱԳԻՐ՝ 97-4.3-Մ3-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 97-4.3-Մ3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 23-ի եզրակացությունը և Կ.Սարգսյանի դիմումը՝


հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. 2020 թվականի հուլիսի 28-ից Կարինե Սարգսյանին նշանակել Սյունիքի մարզպետարանի Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 97-4.3-Մ3-1) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:

2. Կարինե Սարգսյանի փորձաշրջանի համակարգող նշանակել մարզպետարանի Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ (ծածկագիր՝ 97-4.3-Ղ5-1) Պավլիկ Կարապետյանին:

3. Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

7/27/2020



ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՅԱՆ

2020թ. հուլիսի 27
ք. Կապան